867,546· դրանից այր՝ 437,651 հոգի, կին՝ 429,895 հոգի:

Հայաստանի քաղաքներն էլ, Երեւանի ու Լենինականի բացառութեամբ, աւելի շատ միմի աւան են, քան թէ քաղաք — թէ՛ բնակչութեան թուի եւ թէ՛ զբաղումների կողմից: Երեւանի և Ալէք-պոլի բնակչութեան մի մասն իսկ, յայտնի է, գիւղական տնտեսութեամբ է հայթայթում իր օրուան պարէնը: Երեւանի բնակիչների թիւը եղել է 61,152, Լենինականինը*)՝ 37,928, Նոր Բայազէտինը՝ 8,432, Դիլիջանինը՝ 5,609, Իջեւանինը՝ 2,258, Գորիսինը՝ 2,668, եւայլն:

XIII

Եթէ մի կողմը թողնելու լինենք բոլշեւիկ հրապարակագիրներից եւ պատասխանատու գործիչներից ոմանց մի շարք յօդուածները, գրուած դեռ տարիներ առաջ, որոնք 1922–23ին Հայաստանի բնակչութիւնը — չգիտենք՝ ի՛նչ հիման վրայ — 1·2–1·3 միլիոն էին հաշուում**) ու վեր առնենք վերջին տարիների պաշտօնական հրատարակութիւնները միայն եւ համեմատենք նրանց եղրակացութիւնները իրար հետ, դրանք եւս շատ բան կ'ասեն մեզ:

Քիչ– շատ լրիւ տեղեկութիւններ կան 1923–ից սկսած միայն: 1922–ի համար իրական տուեալներ չունինք մեր ձեռքի տակ· 1921–ի մասին եղածները թէեւ թերի են, բայց էլի որոշ գաղափար տալիս են այն ժամանակուան վիճակի մասին: Այդ եւ 1923 ու յաջորդ թուականներին վերաբերեալ տեղեկութիւնները կը տեսնենք, միանգամայն տարբեր պատկեր են բաց անում մեր առջեւ:

Նախ առնենք 1921–ը:

*) Լենինականը, յայտնի է, մարդահամարից քիչ առաջ երկրաշարժի աղէտին էր ենթարկուել, որի հետեւանքով էլ բնակիչների մի դգալի մասը հեռացել էր քաղաքից: Դրանից առաջ նրա բնակիչների թիւն էր մօտ 50 հազար:

**) Օրինակ Ս· Փիրումեանը «Արեգ» ամսատեսրում, 1923 մարտ–ապրիլ: — Նոյնը նաեւ «Նոր Աշխարհ» (Թիֆլիս), 1922, թիւ 3, ուր Հայաստանի բնակչութեան թիւը ցոյց է տրուած 1·3 միլիոն:

Թէեւ եղած տեղեկութիւնները վերաբերում են Հայաստանի գաւառական եւ գաւառական կենտրոններին միայն, եւ յետոյ՝ Զանգեզուրի, Դարալագեազի եւ Լոռիի մասին եղածներն էլ, համաձայն պաշտօնական յայտարարութեան,— եղել են միանգամայն պակասաւոր ու չեն հրատարակուել, մնացած հինգ գաւառների համար հրատարակուած թըուական տուեալներն էլ բաւական են գաղափար կազմելու համար այն մասին, թէ 1927–ին Հայաստանը ոչ միայն բնական նուազագոյն աճում իսկ չէ ունեցել, այլ ցուցահանել է բընական նուազում, չհաշուելով արուեստական նուազումը:

Ահա այդ թիւերը·—

Գաւառներ	Ծնունդ	Մահ
1· Երեւան	551	653
2· Ալէք-պոլ	304	590
3· Էջմիածին	424	641
4· Նոր-Բայազիտ	581	229
5· Մեծ Ղարաքիլիսէ	661	818

Թէեւ, կրկնում ենք, միայն որոշ վայրերի էր վերաբերում այդ պատկերը, բայց նա ընդհանուր էր ամբողջ Հայաստանի համար: Ցիչած բոլոր վայրերում, ուրեմն, 1921–ին դրի առնուած 2,521 ծնունդի դիմաց գալիս էր 2,931 մահ: Հաշուի մէջ մտած հինգ գաւառներից չորսում մահացութեան դէպքերը աւելի են եղել, քան ծնունդներինը: Միմիայն Նոր-Բայազէտի գաւառն է հակառակ համեմատութիւն ցոյց տուել, թէեւ նոյն ժամանակի մի ուրիշ տեղեկութեան համաձայն՝ պատկերը այդ գաւառում էլ նոյնն է եղել, ինչ որ միւսներում:

Այս է 1921–ի իրականութիւնը:

Այժմ, 1922–1926–ի ընդհանուր պատկերը տալու համար, քով–քովի բերենք պաշտօնական թուերը Հայաստանի բնակչութեան մասին, այդ տարիներում:

	Շուն չ
1922 Թուականին	781,111
1923 Թ·	841,043
1924 Թ·	907,755
1926 Թ· յունուար 1,	925,546
1926 Թ· դեկտ· ընդհ· մրդհմր·)	867,546

Հիմա առաջ բերենք այն պաշտօնական